

2680

Գ. ՈՒՎԱՆԵԶՈՎ

ԺԱՆԲ
ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ



ՊԵՏԱՐԱՆ.

1936.

891.995
0-17

891.99 և

0-17

Գ. ՈԳԱՆԵԶՈՎ

2011-07

ԾԱՆՐ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

2680)

ՊԵՏՐՐԱՏ - ՅԵՐԵՎԱՆ - 1936

02.09.2013

13622

Խմբագիր՝ Ս. Ջոբյան
Նկարները և տեխ. խմբ. Հ. Շապուրյան
Սրբագրիչ՝ Ս. Շահբաջյան

Նվիրում եմ վորգուս՝ Վիլյեմին
Ռպանեղով

Գլավխոտի լիազոր Ա.—1153 հրատ. 3689, պատվեր 1161, տիրաժ 4000



22960.59

Այս դեպքը շատ վաղուց ե պատահել:

Մենք ապրում ելինք լեռ ընկած, մոռացված Բաղաբենդ գյուղում, վորը գտնվում եր Գյանջալից (այժմ կիրովաբադ) շատ հեռու:

Հայրս հողագուրի, բոլորովին անգրագետ գյուղացի լեր: Չորս հոգուց բաղկացած մեր ընտանիքը մի փոքրիկ հողակտոր ուներ, այն ել՝ լծկան անասուն չունենալու պատճառով՝ հայրս ստիպված եր լինում կիսու տալ վորև հարուստ գյուղացու:

Սա ել ամեն տարի բերքահավաքին՝ պատճառաբանելով, թե բերքը վատ ե, մեզ զրկում եր նույնիսկ մեր սպասած չնչին հասանելիքից:

Նման դեպքերում մեր ընտանիքը լենթարկվում եր սովամահութան վտանգի: Այդ պատճառով հայրս, հույս չունենալով, թե դրութունը կլավանա, գյուղը թողեց և գնաց քաղաք աշխատանքի:

Հայրս քաղաքից գրել եր, վոր շուտով կգա և մեզ բոլորիս կտանի: Այդ պատճառով ել մալրս վորոշեց մեր ունեցած ցորենն աղալ: Բերքը լավ եր և մեզ 4 փութ ցորեն ու 5 փութ գարի բաժին հասավ: Առավուտը վաղ խուրջինը բարձեցինք իշին և մորս հետ ճանապարհ ընկանք դեպի Նրաղաց:

Ջրադացում մենք ուշացանք մինչև յերեկո:

Արեգակը արագ գլորվում և մոտենում եր արևմուտքին, արդեն պետք է թաղվեր բարձր ու ժուռտ սարերի այն կողմը: Շուտով պետք է իջներ յերեկոն և իր հետ տաներ լույսն ու տաքությունը: Իսկ մենք մեր ցորենի բեռան դեռ կեսն ել չեցինք կարողացել աղալ:

Մեր հեռավոր ազգական Սիմոն ապերը, դեռ ճաշից առաջ ասում եր, թե մինչև արևի մայր մտնելը մենք կգնանք, այնինչ ըոպե առ ըոպե յերկարում ելին ըստվերները և հովիտները, անտառներն ու լեռները ծածկվում ելին անորոշ գույներով:


Բաբա-չալի աղմկոտ ձորի վրա փռվում եր գիշերը:

Շրջապատն ամբողջովին ընկղմվեց գիշերային խավարի մեջ, սակայն մենք հույս չունեցինք, թե նույնիսկ գիշերվա կիսին կմեկնենք: Փոքրիկ, տափակ, չեչոտ ջրադացաքարերն աղմուկով պտտվում ելին առանցքի շուրջը և տաք, թարմ ալյուրը թափում ելին ալրատունը:

Յես ալրատան մոտ նստած, փայտե փոքրիկ թիակը ձեռքիս, հետևում ելի ջրադացաքարին և ալյուրը թափվելիս թիակով բռնում ելի տաք, գորշ ալյուրի կույտը, շտապ գցում ելի խուրջինը, աշխատելով ժամանակին բռնել ալյուրի հաջորդ բուռը:

Մայրս անհանդիստ բարձրանում եր վեր ու նայում, թե ինչպես հատիկները մեկը մյուսի յետևից իրար առաջ կտրելով, թափվում են ցած և փափուկ գորշ ալյուր դառնում: Յերբեմն ել նա դուրս եր վազում բակը իշին նայելու. նա վախենում եր, վոր եղը չգողանան, և մենք ստիպված չլինենք վնասը քաշել, քանի վոր եղը ուրիշ չեր:

Արդեն ուշ եր, յերբ մայրս ալրատան վերջին ալյուրը հավաքեց, խուրջինը պինդ կապեց և ինձ ասաց, վոր գնամ եղը բերեմ: Եղը յետ արի և ուզում ելի գոնե մինչև վ ջրադաց իշին նստած գնալ: Հասակս շատ կարճ եր, իշին չեցի հասնում, դրա համար եղը քաշեցի մի մեծ քա-



քի տակ, թուա վրան և սուր ճիպոտով մեջքը խողտելով,
քշեցի արագ: Ելը թուփ ու քար չնայելով, տրտինգ տա-
լով՝ փախավ: Յես տեսնում ելի, վոր դժվար թե կարո-
ղանամ իշի վրա մնալ, ուզում ելի կանգնեցնել, բայց
արդեն անհնար եր: Չեմ հիշում, թե ինչպես չեղավ, մեկ
ել տեսա ընկած եմ թիփերի մեջ: Թեև սաստիկ ցավ ըզ-
գացի, բայց չես գիտեցի, վոր չեթե ելը փախչի, ավելի
սաստիկ ծեծ կուտեմ:

Ուտտի արագ վեր թուա և կողալով վազեցի նրա
հետևից: Ինչպես չերևում եր, իմ խողտոցը դուր չե-
կել իշին, և նա թուչում եր ուղիղ դեպի գյուղ: Հուսա-
հատ սկսեցի ողնության կանչել Սիմոն ապորը, բայց Սի-
մոն ապերը ջրաղացից դժվար թե լսեր իմ մանկական
ձայնը:

Բայց բախտս բանեց: Գիմացից գեղվորներ ելին
գալիս: Նրանք տեսնելով, վոր չես վազում եմ շնչակը-
տուր, բռնեցին իշին, նրանք ամաչեցրին ինձ, վոր մեծ
մարդ եմ, բայց ել ել չեմ կարող պահել:

Նրանք քաշեցին ելը ջրաղաց և տվին մորս: Արդեն
ուշ չերեկո չեր, և արծաթափայլ լուսինը դուրս եր չե-
կել բարձր լեռների լեակից, չերբ մենք խուրջինը բար-
ձելով իշին ճանապարհ ընկանք: Ճանապարհը կեռաման-
ներով անցնում եր անտառի ու ժայռերի միջով: Գիշերն
այստեղից անցնելը շատ չերկտուղալի չեր:

Սիմոն ապերը մեզ ճանապարհ դրեց մինչև ջրաղա-
ցի մոտի կաղնի ծառը, կանգ առավ և բարի ճանապարհ
մաղթեց մեզ: Նա սիրտ եր տալիս մեզ, վոր վոչինչ չի
պատահի ու կացինը ծառին խփելով ասաց՝ ինչքան կաց-
նիս թխկոցը լսեք, հանգիստ գնացեք, իսկի չվախենաք:

Լուսնի լուսով գնալը այնքան ել սարսափելի չեր,
բայց ելը մեկ-մեկ իր առաջը մի բան տեսնելով, ականջ-
ները ցցում եր, կանգ եր առնում և աչքերը չուած ա-
ռաջն եր նայում: Այդպիսի բոպեններին մորս սիրտը ծուլ
եր ընում, իսկ իմը՝ նրանից ավելի:



Վախեցած մենք լետ ելինք նայում և Միմոն ապուր
կացնի ձայնը լսելով սիրտ ելինք առնում ու պախարա-
կելով իշի վախկոտութունն առաջ ելինք քշում:

Ճանապարհը վոլորապաուլտ անցնում եր գեղեցիկ
անտառի և խանի աշտարակների նման ատամնավոր ժայ-
ռերի միջից, հենց Բաբա-չալի ափով: Մյուս ափից լըս-
վում ելին բուլի կռինչը և գաղանների ձայներ, ականջ
դնելն իսկ սոսկալի չեր:

Շրջապատը վողողված եր արծաթե լույսով: Վոտքի
տակ խշխշում ելին չորացած տերևներն ու ավազը:

Բարձրացանք սարի գագաթը: Իմացից դուրեկան
թարմ հով փչեց:

Ձով եր...

Մայրս՝ չթե սև շորով, գլխին սպիտակ պուտերով
կարմիր թաշկինակ, վոտերին մաշված չստեր, գնում եր
պինդ քալով:

Մայրս գեռ լերիտասարդ եր, բայց նրա լերբեմնի
գեղեցիկ լերեսը ծածկված եր մանր կնճիռներով:


Շրթունքները խիստ սեղմված ելին և միայն սաթի
պես սև աչքերը փալում ելին ապագայի հույսերից:

Նա լերշանիկ եր, վոր հայրս շուտով քաղաքից կգա
և մեզ իր մոտ կտանի:

— Քաղաքում մենք լավ կապրենք, բալաս, — փա-
ղաքշանքով ասում եր մայրս, ձեռքն ուսիս դնելով:
— Եհ, մի մտածիր, կգնանք Ձեդամ, «պովեզ» կնըս-
տենք ու կթուչենք ուղիղ ք ա դ ա ք... Հերդ գրել ա, վոր
տերութենի ոթախ ունի, տափը տախտակած, պատերն
ել կաղեթ քաշած, կպրած: Ե, բալաս, մենք ել կազատ-
վենք մեր ես գեանասանից:

Վերջին խոսքն ասելիս մայրս թեթևացած, խորը
շնչեց և ճիպոտով խփեց իշին:

— Լավը նա ա, — շարունակեց նա, — վոր քեզ ու ախ-
պերներոցդ ուսումի կտանք, գրել, կարդալ կիմանաք ու
ենպես անբախտ չեք լինի, ինչպես քո խեղճ հայրն ե,
վորը սալգաթ ել գնաց, ելի բան չսովորեց:



Մորս մեզմ ու քնքուլը զրուլցը փաղաքշում եր լսողութունս, հրահրում իմ մեջ սովորելու չերագներ.— թուշում եմ քաղաք, ուր ինձ պատկերանում են բազմահարկ գեղեցիկ տներ ու այգիների և ծաղիկների մեջ թաղված դպրոցներ:

— Գիտես, նանի,— շշնջում եմ լես:

— Ի՞նչ, ջան,— հարցնում ե մայրս, պինդ խփելով իշին:

— Յերբ ուսումս վերջացնեմ, անպատճառ են տեսակ մարդ կգառնամ, վոնց վոր Յավրուսց Գալուստը կամ Ղազարը (սրանք մեր գյուղի ամենագրագետ մարդիկն էլին, վոր սովորել էլին քաղաքում):

— Հա, քեզ մատաղ — քնքուլթյամբ ասում ե մայրս և մթության մեջ համբուրում թուշս: Ու նորից ուժով ճիպոտով խփում, վոր շուտ տուն հասնենք:

Ճանապարհը շուռ լեկավ կողքի վրա, դեպի բարձր ափը, վորի տակ Բաբա-չայ գետն աղմուկով գլորում ե լուսնի լույսի տակ իր արծաթափայլ ջրերը: Դիմացի ափն ամբողջովին ծածկված ե ատամնավոր ժայռերով, վորոնց վրա տարածվում եր խիտ անտառն անշշուկ կանգնած գիշերալին լուսթյան մեջ: Թեք ափով մենք իջնում էլինք դեղնագույն ավազուտի վրայով: Ափի չերկանքով մեջ ընդ մեջ թփուտներին ու անտառին, լայն շերտերով ձգվում էլին մեր համագյուղացիների արտոները: Այստեղ անտառի խոնավ հոտին խառնվում եր դաշտային ծաղիկների բուրմունքը: Շների հաջոցը հասնում եր մեզ:

Քիչ ել գնացինք և ահա մեր առաջ հովտում չերկաց մեր գյուղը: Մթության մեջ փայլվում են ադոտ առկայծող ճրագները: Յես ուրախ բացականշում եմ, վոր շուտով տուն կհասնենք:

— Շատ լավ կլինի,— ասում եմ բարձրաձայն:

— Ի՞նչ,— հարցնում ե մայրս:



— Այ, են ելի, վոր Գալուստի կամ Ղազարի նման մարդ կգառնամ:

— Ի՞նչ խոսք:

Շների հաջոցը շարունակ ուժեղանում եր: Մայրս անհանգստանում եր, թե գլուղի միջով ինչպե՞ս պետք է անցնենք, վոր շները չկծեն մեզ:

Վերջապես հաջողութամբ հասանք առուն: Դեռ տուն չհասած մեզ ընդառաջ վազեց փոքրիկ լեղբայրս և ուրախ բացականչեց.

— Նանի, ապին շուտով կգա:

Մայրս գրկեց նրան, պինդ համբուրեց թշերը և հարցրեց.

— Դու վճրտեղից գիտես:

— Այ ենտեղ, Սոնա նանի մոտը նամակ կա, — թոթովեց մանկական ձայնով: Այդ տեղեկութունը հրրճվանք պատճառեց ինձ և լես մտքով նորից սլացա քաղաք:

Հենց վոր խուրճինն իշի վրայից վերցրինք, լես հեծա եշը և գնացի Առաքել ապորենց տուն, հանձնելու եշը:

Եշը հանձնելով, արագ վազեցի տուն, վոր իմանամ, թե հայրս ի՞նչ է գրում քաղաքից:

Մայրս նամակը ձեռքին բռնած, մեկ այս յերեսն եր շուռ տալիս, մեկ այն, բայց վոչ մի կերպ չեր կարողանում հասկանալ, թե ի՞նչ է գրած այնտեղ:

— Գնանք տերտերի մոտ, — ասաց նա ու թեվիցս քաշեց:

Յես մեծ մորթե փափախս ծածկեցի ու մերկ, կեղտոտ վոտքերով, չփչփացնելով ճանապարհի ցեխերի մեջ, վազեցի մորս հետևից: Տեր-Մեսրոպը դեռ քնած չեր և շան հաջոցի վրա ինքը դուրս լեկավ: Չարմացավ տեսնելով ինձ ու մորս, վոր այսքան ուշ այցելում ենք իրեն, բայց լերբ իմացավ պատճառը, շանը քշեց և մեզ տուն տարավ:



Նա դանդաղ վերցրեց նամակը, մի քանի անգամ շուռուցումով տվեց ձեռքին, հետո դրեց թախտին և առանց շտապելու մոտեցավ սեղանին: Աչնտեղից նա վերցրեց ակնոցների պատյանը, հանեց ակնոցները և աչքերին գնելով վերցրեց նամակն ու սկսեց վանկ-վանկ կարդալ:

Յես մեծ ուշադրությամբ լսում էլի նամակի բովանդակությունը և աչքս չեյի հեռացնում տեր-Մեսրոպի ակնոցներից: Յերբ տերտերը կարդալը վերջացրեց, ակնոցները վերցրեց, դրեց պատյանում ու նամակը տրվեց մորս: Մայրս վերցնելով նամակը, շնորհակալություն հայտնեց տեր-Մեսրոպին, և մենք դուրս լեկանք:

Յերկուսս ել լուռ գնում էլինք տուն: Յես ընդհատեցի լուռությունը:

— Նանի, — ասացի լես:

— Ի՞նչ է, բալաս — հարցրեց մայրս:

— Յեթե լես քաղաքում դպրոցը վերջացնեմ, ինձ համար ենպիսի շուշա աչքեր կառնե՞ս, ինչպես տերտերինը:

— Քո ինչի՞ն են պետք ակնոցները, բալաս: Ակնոցները դնում են հարուստ մարդիկ, վորոնք չգիտեն թե ինչ անեն իրենց փողը, ակնոցի պես ավելորդ բան են առնում, պարծենալու համար:

— Հա՛, — զարմացած հարցնում եմ լես և շտապում եմ համնեմ մորս, վոր արդեն առաջ է անցել:

Տուն գալով, մայրս վառեց փոքրիկ ճրագը, սկսեց հավաքել իր ունեցած-չունեցածը, իսկ լես հանվեցի, պռակեցի անկողնում և նայելով մորս շարժումներին, մտածում էլի հորս գալու մասին, վորը մեզ քաղաք պիտի տաներ և ազատեր այս մրտա գետնատնից:

Յես այնքան մտածեցի, վոր ել չնկատեցի, թե ինչպես քնեցի ու լերբ արթնացա արդեն շույս եր ու կեդտոտ պատերի վրա խաղում էլին արևի ճառագայթները:

Մայրս ելի ինչ վոր բան եր հավաքում ու սարքում, իսկ նրա մոտ հարեվան կանաչք նախանձով նայում է-



լին նրան և իրենց հետաքրքրող հարցեր տալիս:

Մի քանի ժամից հետո մայրս ամեն ինչ հավաքեց ու պատրաստ եր ճանապարհ ընկնել թեկուզ հենց նույն րոպեին:

Յես արագ հագնվեցի, վազեցի բակը ու ընկերներս-րիս պատմեցի, վոր մենք շուտով քաղաք ենք գնում:

Ջրույցի ամենատաք ժամանակ մայրս ձայն տվեց ինձ ու յես գնացի:

— Դե, բալաս, մենք պետք է գնանք սարը և մնաս բարև ասենք տատին. կարելի չե յերկար ժամանակ չըտեսնենք նրան:

Այս ասելով մայրս մյուս յերկու փոքր յեղբայրներին հանձնեց հարեաններին ու մենք գնացինք սարը:

Այնտեղ մենք յերկար չմնացինք: Մի քիչ նախաճաշեցինք, տատին մնաս բարով ասացինք և նորից ճանապարհ ընկանք դեպի տուն:

Իրնաներից դուրս գալով, մենք միանգամից ընկանք գորշ ու փոշոտ ճանապարհը: Մենք շարունակում ենք մեր ճանապարհը, յերեկոյան վերջալույսի քնքուշ կարմրով պարուրված: Մեր առաջ, ներքև, հեռվում յերևում է, մեր գլուղը, նրա քառակուսի ցածլիկ յեկեղեցին ու կանաչ բանջարանոցները: Մայրս պատառոտած չստերը ծըլլեցանցնելով, արագ քայլում եր փափուկ փոշու միջով ու ինձ ել ասում եր, վոր յետ չմնամ: Ու վորովհետև յես չեմ կարողանում հասնել նրա յետևից, ուստի վազում եմ:

Արևն արդեն մայր է մտնում: Ողի մեջ դուրեկան խոնավութիւնն կա: Ճանապարհի փոշու և դաշտային խոտերի հոտը սփռվել է չորս կողմ: Աղմկող գետի այն կողմը, դեպի այգիները գնացող կեռմանի մոտ արածում է մեր գլուղացիների վոչխարների ահագին հոտը, իսկ գանազան կողմերում փալլ են տարածում բոցավառվող խարուկներն իրենց շուրջը: Այնտեղից գալիս են թուրքահան տխուր բայաթու մեղամաղձիկ հնչյունները:



Մյուս ուրը հայրս լեկավ: Յերբ լես տեսա նրան փողոցի ծայրին, վազեցի նրա մոտ և բոբիկ վոտքերով թուա գրկեցի նրան և անթիվ անգամ համբուրեցի նրան, ուրախանալով, վոր նա լեկել է: Իմ լերձանկուլթյունը չափ ու սահման չունեք: Յես համարյա վոշ մի քալ չելի հեռանում նրանից և շարունակ հարցնում ելի, թե լերբ եքդ գնում:

Գիշերները շորերս բարձիս տակն ելի դնում, վոր գնալու բոպելին չփնտռեմ:

Բայց ինչքան մեծ լեղավ իմ վիշտը, լերբ մեկնելու նախորդակին ինձ հայտնեցին, վոր պետք է մնամ գյուղում:

Տխրությանս չափ չկար, վոր ինձ քաղաք չեն տանում: Չողնեցին իմ բոլոր աղաչանքներն ու հեկեկանքները:

Յես մեր ընտանիքում առջնեկն ելի և հորս սիրած վորդին ելի: Վորքան ել դժվար լինեք ծնողներիս համար ինձնից բաժանվելը, բայց նրանք ստիպված ելին ինձ թողնել գյուղում իբր թե այբուբենը սովորելու համար. Իսկ իրոք, ինչպես հետո պարզվեց, պատճառն այն եր, վոր հայրս քաղաքում նույնպես հնարավորութուն չունեք մեծ ընտանիք կերակրելու, վորի հետևանքով ինձ թողնում ելին գյուղում հորեղբորս մոտ: Այդ հորեղբայրս ավելի ունևոր եր, իսկ ընտանիքն այնքան ել մեծ չեր:

Յերբ տան «իրերը» բարձեցին սալլին և ծնողներս սկսեցին հրաժեշտ տալ մեր ազգականներին, լես թուա սալլի վրա և տեղավորվեցի մյուս լերկու փոքր լեղբայրներիս մոտ: Յես ուզում ելի, ինչ ել վոր լինի, նրանց հետ միասին քաղաք գնամ: Հարկավոր եր արդեն ճանապարհ ընկնել, իսկ լես սալլից չելի իջնում և աղաչում ելի չթողնել ինձ գյուղում:

Չնայած, վոր դեռ շատ փոքր ելի, լես խոստանում ելի հորս և՛ աշխատել և՛ սովորել...

28960-59



Հորս աչքերին լերևացին արցունքներ: Նա գրկել էր ինձ և լերկար սեղմել լերեսս իր չսափրած դեմքին: Նրա մազերը ծակում էին լերեսս, բայց այդ հաճելի լեր ինձ և լես ավելի էի սեղմվում հորս, վորից անշատում էր ինձ իմ չար բախտը:

Վերջապես մեզ բաժանեց Անտոն ապերը, և նրանք ճանապարհ ընկան:

Մենք Անտոն ապոր և Սոնա նանիի հետ միասին ճանապարհ գրինք նրանց մինչև գյուղի լեզրը:

Մայրս քայլում էր կողքիս, սրբում էր արտասուքները, սիրտ էր տալիս ինձ, թե լեկող տարի ինձ նույնպես քաղաք կտանեն: Նրա խոսքերի մեջ մի ինչ վոր անվատահուժյուն կար, լերևում էր, վոր ինքն էլ չէր հավատում իր ասածին և ամոթով նա լերեսը շուռ էր տալիս մյուս կողմը:


Գյուղի լեզրին նորից համբույրներ, նորից արցունքներ:

Նրանք գնացին, իսկ մենք դեռ կանգնած էինք ու նայում, թե ինչպես աստիճանաբար Թալալի ձորը կլանում է սալը:

Վերջապես ամեն ինչ անհայտացավ ձորում և լես, չորացած արցունքներն այտերիս, տուն վերադարձա:

Յերկու շաբաթից հետո դպրոցում պարապմունքն ըսկըսվեց, ու լերք լես պայուսակս ուսիս, չոր հացի պատառ ձեռքիս դպրոց վնացի, լերելաներն սկսեցին ինձ ջգրացնել, վոր իմ ծնողներն ինձ թողել են ու իրենք գնացել քաղաք:

Յերբեմն այն տեղն էին հասցնում, վոր լես ամաչելով ու մոռացված քաշվում էի մի անկյուն, դառն արտասունք էի թափում, նախատելով ծնողներիս դեպի ինձ ունեցած անխիղճ վերաբերմունքի համար: Մեզ չհաջողվեց լերկար սովորել, վորովհետև այդ տարին ցարական կառավարութունը հայ-թուրքական կոտորած կազմակերպեց:



Մեր գլուղն ավերեցին և բոլոր գլուղացիները, աշակերտների ու մեր ուսուցիչների հետ միասին գլուղից փախանք ու թագնվեցինք մի մեծ ու խիտ անտառում:

Բայց սա արդեն այլ պատմություն է, գրված մի ուրիշ, ավելի մեծ գրքում, վոր դուք պիտի կարդաք հետո, չերբ հեռոնետե կտվորեք կարգալ լերկար և բազմակողմանի պատմություններ:



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.



«Ազգային գրադարան»



NL0408334

A white rectangular label is located in the bottom right corner of the page. It contains the Armenian text «Ազգային գրադարան» (National Library) at the top, a standard 1D barcode in the middle, and the alphanumeric code NL0408334 at the bottom.

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

733

13622



Г. ОГАНЕЗОВ
ТЯЖЕЛОЕ ДЕТСТВО
Гиз ССР Армении, Ереван, 1936 г.